

րութեան մէջ է գտնուում եւ նրա տառապանքներին մասնակից է լինում: (Ստորագծողը մենք ենք. Մ. Վ.):

Դէմոկրատ աշխարհահայեացքի տէր մարդին անդամ մեր դժոխսային իրականութեան մէջ կարող է երբեմն այդպիսի ցանկութիւններ յայտնել. նոյնիսկ աւելի — նոր Տիգրան Մեծ մը, ժամանակաւորապէս, որ հզօր ձեռքով կարգապահ ու ռազմիկ ժողովուրդ մը կուէր ու դարձնէր՝ հայութեան ազատագրութեան համար...

Որքա՞ն ուշադիր պէտք է լինէր այդ անսովոր մարդը դէպի ժամանակի համամարդկային հոսանքներն ու յուզումները, որքա՞ն կարգացած եւ ո՞րպիսի նուրբ հոտառութեան ու քրքրանոցութեան տէր՝ ըսելու համար այն բոլորը, ինչ որ կ'ըսէ իր գրուածքներու մէջ... Մարդ մը, որ միջնակարգ կրթութիւն անգամ չէր ստացեր, որ հազիւ հասեր էր մինչեւ գիմնադիտայի չորրորդ դասարանը... Միտք մը՝ որ պաշարուած լինելով հանդերձ հայրենի իրականութեան բազմակիսիւ հանդուցներով եւ դժուարին, հոյակապ առաքելութեան մը հոգսերով, կը մնար միշտ դռնբաց՝ դրսէն եկող բոլոր առողջ գաղափարներու համար եւ որ մասնաւոր խանդաղատանքով կը գրկէր ու կը մարտէր այն գաղափարները — գեմոկրատիզմի, ընկերվարութեան, մտքի ու խզճի ազատագրութեան վերաբերեալ — որոնք կոչուած են վերջ է վերջոյ բարձրացնելու եւ բարօրելու իր սիրած ու գուրգուրած «ամբօխը», իր գերագոյն պաշտամունքի առարկան — հայ աշխատաւոր, դժբախտ ու չարքաշ ժողովուրդը:

Դուք չէք գտնի համաշխարհային ազատագրական հոսանքներու մասին այդպիսի շիտակ քմբոնումներ եւ այդպիսի հրահանգիչ տողեր այն ժամանակուան մեր համբաւաւոր ու դիպլոմաւոր հրապարակագիրներու մօտ, որոնք սակայն երկար տարիներ յաճախէր էին եւրոպական համալսարաններ եւ դօքտորութեան աստիճանի էին արժանացեր. — Գրիգոր Արծրունի, Արզար Յովհաննիսեան, Սպանդար Սպանդարեան, Աւետիք Արասխանեան եւ այլն:

VI

Հայոց պատմութեան վիպագրողը երբեմն-երբեմն թոխքներ կը գործէ նաեւ դէպի պատ-

մափիլիսոփայութեան ու ընկերաբանութեան սահմանները:

Անկարելի է առանց խորին հաճոյքի կարգալ «Մամուէլ»ի այն գեղեցիկ հատուածը, որ խորագրուած է — «Փակագծի մէջ»: Բաֆֆին կը բացատրէ, թէ ինչպէս հայ երկրի աշխարհազրական դիրքը, տեղազրական պայմանները, անմատչելի լեռներն ու անդնդախոր ձորերը, կլիման, հաղորդակցութեան բիւրաւոր խոչընդոտները անզբաղարձեր են հայ ժողովրդի պատմութեան վրայ եւ դարձնել են անոր տխուր ճակատագիրը:

Եւ դարձեալ, նիւթին համեմատ, գրողի ոճը արծուային սլացք կ'առնէ ու կը վերստանայ իր վսեմ ու յուզիչ հանդիսաւորութիւնը: Բերենք կտոր մը այդ գեղեցիկ նկարագրութեանն.

« Երկիրը լեռնային էր:

Լեռնային անբնդհատ շղթաները իրանց բազմաթիւ ֆիւլաւորութեամբ կտրատել էին անհաւասար մակերեսոյթը, կազմելով մի հըսկայական ցանց: Այդ ցանցի մանր եւ անձուկ հիւսուածքի մէջ սեղմուած էին խորին ձորեր, մթին հովիտներ եւ ցեղ դաշտեր: Այդ ձորերը, այդ հովիտները, այդ դաշտերը ներկայացնում էին միմի գոսառ, որ բաժանուած էին բնական սահմաններով... Լեռը անմատչելի պատկէշ էր դրել նրանց մէջ, իսկ ձորը՝ անանցանելի յարմատ:

Ապառաժների կուրծքի վրայով, ներքեւում՝ անդնդային խորութիւն, որտեղից հագիւ լսելի էր լինում անցնող գետի խուլ դղրդղիւնը. վերեւում՝ քարշ ընկած ժայռեր որ ամէն րոպէ սպառնում էին խորտակուիլ եւ ամէն ինչ ծածկել իրենց սհարկու փլատակների ներքոյ, — բնութեան այդ սուկալի կատաղութեան մէջ մա՞րդը, լեռնային մարդը, միայն նա է կարողացել իւր համար նանապարհ բաց անել եւ մրցել վայրենի այծեամների հետ:

Տեղ-տեղ հաղորդակցութիւնը կտրում էին մթին, անբափանց անտառները: Նրանց մէջ մարդիկ անում էին հսկայ ծառաստանի հետ, կերակրում էին նրանց պտուղներով եւ իրանց սաղարթախիտ աշխարհից դուրս՝ մի այլ աշխարհ չէին նանաչում: Այդ անտառներին մերձեմալիս, մարդիկ այնքան չէին վախեցնում